

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՐԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Գ. ՇՐՋԱՆ

Թի՛ր 59

1899 ՄԱՅԻՍ 22

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դանեկան, վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ, **13** դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ: Թղթատարի ծախքը համապատասխան կը վերաբերի: Հասք **40** փարայ: Դաւաններէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրուէի տեղ **105** դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մէջքն Յանգուստան. — Մատենախօսական:
Ա. Բ. Բ. — Աղջկանց Բարձրագոյն վարժարանին եւ
կանանց Յատուկ Լրագրին առթիւ:
Խ. Բ. Բ. — Աղջկանց. — Ներկողիցի Առաջնորդը:
Ս. Մ. Գ. — Սկզբունք. — Շարագրութեան.
Խժարանութիւն:
Ղ. Բ. Բ. — Գիւղատնտեսական. Տեղական տեղի պատ.
ընտանութիւն:
Ղ. Բ. Բ. — Ճարտարարուեստական. Ներկարարութիւն:
Ղ. Բ. Բ. — Արհեստական գիտելիքներ:
Տնտեսական. — Խոհանոցի բաժինը:
Թերթին Հանրագիտական. — Ուղեւորութիւն երկրիս
կեդրոնը (Ժիւլ վէրն)
Թղթակցութիւն. Աղջ եւայլն.

Հատը 40 փարայ

Տպագր. Գ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճառագոյն, Թիւ 44

„ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի Բ. ԵՐԶԱՆԸ

Ամբողջ հաւաքածոն՝ թիւ 1էն թիւ 52, կը ծախուի մէկ օսմ. ոսկի. իսկ իւրարանջիւր անջատ թերթ 5 դահեկան:

Հանրագիտակի Բ. Տարեշրջանի մէջ կարգ մը անձնաւորութեանց թերթ զըրկած ենք, իրենց բաժնեգինը վճարած չըլլալուն համար, ժամանակ մը վերջը դադարեցուցած ենք թերթերու առաքումը: Արդ՝ կը խնդրուի մեր Պատ. Գործակալներէն, որ բարեհաճին իրենց շրջանակին մէջ դռնուած այդպիսի անձնաւորութիւններէ ետ պահանջել թերթերը, և մեզ վերադարձնել:

Անոնք որ՝ հակառակ մեր ազդարարութեան, կամ թերթերը ետ տուլ չուզեն և կամ փոխարժէքը չի վճարեն, հետզհետէ իրենց անունը պիտի հրատարակենք հոս:

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՅԻ ՀՌԶԱԿԱՒՈՐ ԳՈՐԻԶԲԱ ՏԱՆ

Կեդրոնատեղի

Յ. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ ԵՂՐԱՐԳ ԴԵՂԱՐԱՆԸ

Ի Զ Մ Ի Տ ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար տալէն տեսակ պիտոյք, գիւրամատչելի գներով:

Ծանօթ. — Մանրագիտակներու տեսակներուն և գիններուն վրայ փափաքողներու, մանրամասն տեղեկութիւն կը արուի թղթակցութեամբ:

Վ Ե Ր Զ Ա Պ Է Ս

Լոյս տեսաւ ՄԱՅՍԹԵՐՍԶԱՅԹ ՍԻՍԹԷՄԲ որ տասը շաբաթէն կուտուցանէ Ֆրանսերէն կարգալ ու սահուն կերպով խօսիլ:

Ամբողջ գործը կը բաղկանայ 15 տեսարկէ, գին 30 դր:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ, որ կը բաղկանայ 3 հատորէ, այս անգամ վերադին տպագրուեցաւ Ա. մասը ընտիր թղթի վրայ: Գին 50 վրյ:

Այս քերականութիւնը որ պատկերներու վրայ նոր բնական մեթոտով կ'ուսուցանէ հայ լեզուն, գնահատուած է բոլոր մանկավարժներէ: Դիմել Մարգարեան գրատունը:

ՍԻՄՈՆ Յ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

հարատարագէտ ազգայինը, հնարած և մեղաշնորհը առած է

Հ Ր Ա Լ Ո Յ Յ Ի Ա Ի Ա Բ Ա Ր Տ Ի

(allume—feu)

որ առանց դժուարութեան, վառարաններու կամ կրակարաններու փԱՅՏՆ ու ԱՆՌՈՒԽԸ կը վառէ՝ նոյն իսկ եթէ թաց ալ ըլլան, առանց ու եւ անախորժ հոտի կամ անպատեհութեան:

Իւրաքանչիւր ծրար կը բաղկանայ 6 հրալոյց խաւաքատէ, և կ'արժէ 30 սանթիմ:

Կը պատրաստէ՝ նորաձեւ այցե-տոմսեր, ՓՈՐԱԳԻՐ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՈՎ, որ յոյժ հաշակաւոր նութիւն մ'ըլլալով, զիմաղները շատ քիչ պիտի մնան:

Կը պատրաստէ նաեւ, այլ և այլ պարզ և լուսանկարչական փորագրութիւններ:

Կ'առանձնէ գրքերու, տետրակներու և ին. սովորական կամ ճոխ կաղմ: ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ կ'ընէ, Արեւելիի համար, մեքենաներու, Վեներական հնութեանց լուսանկարներու ևն:

Մանրամասնութեանց համար գիմել հետեւեալ հասցէին.

Simon Nahabed
St. Lazare

Italie

Venise

» 192. ԱՆԵՂՈՒՔ ՃԱԶՈՒ ԿԱՐԳԱՆ.

- էջ. 246. Երեկոյի փառեր.
» 278. Մեռեալիկ ծննդեան.
» 308. Կցուող փոխման Ածծեր.

Ճնճղագրերուն, լուսազարդութեանց
և այլ գրուածներուն մէջ խաչորացոյցի
միջոցաւ՝ լոկ աչքէ վրիպած, այնպիսի
նրբին կիառածներ կը դիտուին որ կը
վկայեն զեղագրին վարպետութեան մը
այնու ձեռագրին յորդր կ'աւելնայ.

Այդ ճարտար գործին նկարած գլր-
ռադներուն վրայ գէթ աղօս գաղափար
վը տալու համար կը ստուերագծենք ա-
ռաջին էջին ճակատը և կը ներկայա-
ցնենք բանասիրաց :



ԴՐՈՒԱԴ Ա. ԼԶԻՆ

Այս էշտեօսարի ԴԻՄԻՏՐԻՍ 'Ի ԿՈՒԼ ԿՈՄԵՐՈՅ ՑՈՒՆ
ՀԱՅԵՐԻ ՈՒՐԻՆԵՐԻ ՄԻՆԵՐԻՆԻ ՅԵՐԿԻ (տես էջ 375).
Հատեր նոյն տետրը ԹԳԹատերով հին-
ցուցեր են մինչեւ որ էջերուն ստորին

անկիւնները մաշեր և ամբողջութիւնը
նորոգութեան կարօտ լիծակի մը մէջ է
ինկեր. ուտոի տեսարս կաշեպատ գիրք
կազմողը ի հարկէ ստիպեալ ձեռագորին
եղերքը մկրատեր և անկիւններուն մա-
շւոքը նոր թղթով լրացուցեր է, ինչպէս
կ'երեւնայ առաջին էջին պատկերէն:

Այս ձեռագրիս գլխաւոր շահեկանութիւնն է անշուշտ ցարդ սուպագրուած Շարականներու, Ժամագրքերու, Տաղարաններու և այլ դրոյ մէջ դիտուած երաժշտական խաղերէն՝ ըստ երեւոյթին, տարբեր խաղեր պարունակելը։ Ինչպէս ինքեքոյ էջ 144է օրինակելով դետեղեալ նմոյշէն կարելի է գիւրաւ մտկաբերել։

[Handwritten musical notation]

ԶԵՌԱԳՐԻՆ ԽԱԶԵՐԸ

Նմանապէս Մանր Ուսման ամբ-
բողջ ընթացքին մէջ արտահան-
կէտերու երաժշտական կիրառումը
կը յաճախուի. և երաժշտական բա-
ռեր իրենց սկզբնագրերով կը նշա-
նակուին, ինչպէս (տես էջ 310) կա-
րելի է ստուգել յետագայ օրինա-
կէն.

ԼՎԵՆԿԱՆԻ ՔԱՆԻՆԻ
ԳԱՅԵԼԵՐԻ ՄԱՅԻՆԻ

ՏՐՈՀՈՒԹՆԱՆ ԿԷՏԵՐ

Տառներկու այլ և այլ կերպով
Ո՛րէւ էհէ՞հէ կը ձայնադրուին, որոնց

Հանդէպ լուսանցքին ձեջ իւրաքանչիւր
եղանակ կը նշանակուի (տես էջ 290—
299) — անոնց անուններն օրինակելով
նոյնպէս կը ներկայացնենք արդոյ բա-
նասիրաց :

ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

1. Պարզ.
2. Դղզած.
3. Անմեղուկն.
4. Խաւսողն.
5. Չաղ.
6. Մամկոն.
7. Չաղ.
8. Հիւանդ.
9. Գուռնակ.
10. Հոռոմ.
11. Զուլհակ.
12. Փսրակ.

Հայեր (տես էջ 222) և Հայեր (տես էջ 344) հանդիսաւոր պարագաներու առան ի ձայն երգելու համար եղանակադրեալ կը տեսնուի, ինչպէս.

Հանդիսաւոր Մանսի անի ձայն
 անպատմելի իմիաստ
 հայրամանակ անկախ
 անոր ձայն երգելու էր կրի, էր
 և էր անգամ անգամ թից.
 Եւ իմիաստ իմ ձայն իմ
 տուած ձայն էր անկախ

«Մանր Ուսման» մէջ (տես էջ 207—245) Պատարադի Սբ. Խորհուրդը թէ և ձայնադրեալ է, բայց զգեստաւորման պահուն երգուած խորհուրդի հոգեշունչ և քոյածանօթ հանդերձի շարականը կը պակսի, ինչպէս նաեւ կը պակսի իւր շարականը:

Նաեւ ցոյսօր ժամագրոյ մէջ պահուած Շնորհալոյն շարականներէն հետեւեալը Մանր Ուսման մէջ չեն գտնուիր:

1. Աշխարհ ամենայն,
2. Առաւօտ լուսոյ.
3. Այսօր անձառ.
4. Նորոգող տիեզերաց.
5. Աստուած անեղ.

6. Նորաստեղծեալ.

7. Արարչական բանին.

8. Նահապետին Աբրահամու.

9. Նայեաց սիրով.

10. Արեւադալ:

(Շուր.)

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Ե Ի

ԿԱՆԱՆՑ ՅԱՏՈՒԿ ԼՐԱԳՐԻՆ ԱՌԹԻԻ

Ձեռ գիտեր թէ պիտի յաջողին մեր կրօնները: Բայց սա գիտեմ որ վերջերս մեր կրօնանց զարգացած և ուսեալ դասակարգին մէջ գովելի շարժում մը կը շեշտուի հետզհետէ, իրենք իրենց՝ երկու կարեւոր ձեռնարկներ ի գլուխ հանելու նպատակով. բարձրագոյն վարժարան մը հիմնել մի միայն աղջկանց յատուկ. և երկրորդ՝ լրագիր մը, ամսական թիւով կամ շաբաթական թիւով, կանանց սեռին համար:

Ես ի վեր հանելով հանդերձ այդ երկու ձեռնարկութեանց անհրաժեշտ պէտքն ու օգտակարութիւնը, պիտի ջանամ միջին ճամբայ մը բռնել և քանի մը սողով ծանրանալ այդ երկու ծրագրերուն գործադրման համաձայնականութեան վրայ:

Այս վերջին օրերս՝ զոյգ մը յօդուած ինչ կաւ աչքերուս տակ. Ս. Զարուհիի՝ «Բիւզանդիոն»-ի մէջ՝ «Հայուհեաց յատուկ շաբաթական թիւով մը պէտքը», և Նարինիի, «Լիւնզ պէտք է ընեն մեր կրօնները»՝ «Մասիս»-ի մէջ. առաջինը՝ չէր քաջալերեր և երկրորդը կը վհատեցնէր միայն: Ես այնպէս կը կարծեմ թէ այդ տեսակ դժուարին ծրագրեր կամ ուրուագծեր աւելի համակրութեամբ և աւելի եռանդով պէտք էին ընդունուիլ և բազմակողմանի քննութեամբ մը ուսումնասիրուիլ:

Ձեռ ըսեր թէ համակրելի գրադիտուհին պէտք եղածին չափ չէր զբաղած իր «շաբաթական թիւով» արդէն աւելին ըրած էր խնդրոյն յարակցութեանց մէջ ալ մտնելով:

խակ Նարկիս — որ կնոջ դիմակին տակ... պերսուսը մ'ըլլալ կը թուի ինձ — շատ լուրջ կարծիքներ յայտնած էր, թէ եւ քիչ մը շատ խոտապահանջութեամբ, որոնք դուցէ կնոջական դիւրի գգածութիւններ վիրաւորելու պիտի ձգտէին, անշուշտ ո՛չ կամուս:

Տեսականէն գործնականին անցնելով, յաջողութեան առաջին պայմաններէն մին եւ գլխաւորն ըստ իս դրամն է, ամենակարող դրամը: Բնական է որ կին ձեռնարկողներու մէջ հարուստ տարրը իրրեւ լաւ դաստիարակուած եւ ուսեալ՝ մեծ ձայն պիտի ունենար*) ու յետոյ, յայտնի բան է թէ կիները դրամ հաւաքելու գործին մէջ ո՛րչափ յաջողած են ամէն առեւն:

Ես չեմ հաւատար թէ մեր կիները բնաւ չկարենան այս գործը ի գլուխ հանել. Հիւանդանոցին ի նպաստ արուած նաւագահանդէսին եւ ուրիշ առիթներու մէջ՝ քիչ շատ՝ մեր կանացի գործնական կարողութիւնը քրեւան ելաւ: Կը բաւէ որ պէտք եղած դուրսը ճարտի, կը բաւէ որ կարող ուսուցչուհիներ կամ մանկավարժուհիներ պաշտօնի կոչուին եւ ի պահանջել հարկին, գտնէ առժամապէս, այցելու օտար վարժուհիներ ալ բերուն ֆրանսերէն լեզուի բարձրագոյն դասընթացքին եւ գիտութեանց համար: Ասոնք կ'ըսեն որովհետեւ առանց... արանց հաճոյակատար մանակցութեան, դուցէ առայժմ ուրիշ միջոց մը չկրնային գտնել մեր կիները՝ իրենց սոյն ագամանք երազը իրագործելու համար:

* * *

Մեր մէջ, էգին եւ «Ֆէմինիսթ»ին ներքին եւ սիրուն յաւակնութեանց մին ալ՝ Գալ է, շարաթաթերթ մը կամ ամսաթերթ մ'ունենալ կանանց յատուկ ու միայն կիներէ խմբագրուած: Այս ծրագիրն ալ — եթէ ծրագրի ձեւին առի մտած է իրօք այդ երազն ալ — նուազ ետադիրութեամբ չի շոյուիր, չի փայտաշուիր մեր գեղեցիկ սեռին մոտոյի խմբակէն: Կանանց յատուկ ասպարէզներ ինքնին մասին Ս. Զարուհի եւ Նարկիս յայտնած դադափարներուն գլխաւոր գծե-

*) Կրկնակ աստակէտով՝ նիւթապէս թէ խմացապէս:

րուն մէջ նմանութիւն մը գտայ. երկուքն ալ դառնութեամբ մը ցոյց կու տային պաւստը, գրեթէ սովը՝ կին գրողներու՝ մեր մէջ: Եւ ասիկայ տուգիւ ամենէն էական կէտն էր որ ուշադրութեան առնուելու էր մեր «Ֆէմինիսթ»ներուն կողմէն՝ այդ աստակ նպատակ մը արտայայտել եւ իրականացնել անմիջապէս վերջ, առանց մոռնալու նաեւ խմբագրական եւ ասպարէզական փշոտ դժուարութիւնները, որոնք առաջին քայլ մը երկրորդել, երրորդել թոյլ չեն տար շատ անգամ եւ արանց՝ հզօր կամքն ու նկարագիրը միայն կրնան դիմագրաւել... Բայց ես չեմ կարծիք ինչպէս Ս. Զարուհի կը խորհի թէ կանանց հանդէս մը «որքան ալ սիրուն ըլլայ ու որքան ալ օգտակար մեր սեռին, ապահովարար չպիտի սիրտի» որովհետեւ քաղրի ընթերցողներ ու ընթերցողուհիներ արդէն բաւական թուով ունինք — նոյն իսկ վարժարաններէն սկսելով, — եւ անոնց մեծագոյն մասին մէջ ձգտում մը կը նշմարուի միշտ դէպի նորը, դէպի հաճելին, չըսեմ գաւաթալին... եւ կը կարծէք թէ «կանանց հանդէս մը» նորութիւն մը չպիտի ըլլայ մեր մէջ, երբ մանաւանդ անոր մէջ իգական սրտին, մտքին, ճաշակին, նոյն իսկ դժուարահաճութեան գոհացում տուող նիւթեր գտնուին, եւ մանաւանդ երբ «մօտակայ ու հեռուոր վայրերէն անընդհատ առաջարկութիւններ կ'ըլլան տարիէ մ'ի վեր» հաստատուելու կանանց յատուկ շարաթաթերթ մը, ինչպէս կ'ըսէ յարգելի գրագրաւորին իր յօդուածին սկիզբը:

Բայց... չաճապարենք: Բէտ-էէէ՛ք մը անօգուտ պիտի ըլլար եւ անխմաստ: Անոր համար՝ ես պիտի փախալէի որ — եւ իմ անկեղծ մէկ բողձանքս պիտի ըլլար ան — «Ֆէմինիսթ»ներուն կամ կնոջական շարժումին գլխաւոր ուժերէն մին — անշուշտ կին — ի գլխաց իր խմբակին պարզէր երկու ծրագրերուն ալ կամ օրինակը՝ կամ մէկ ուրուագիծը՝ թերթի մը մէջ՝ որպէս զի աւելի հետաքրքրէինք եւ աւելի լայն տեսութիւն մ'ընէինք անոնց վրայ:

Մնաց որ այս պահուս փայլուն կամ համեստ կին գրողներ բաւելուն չեն պակսիր, թէեւ ասկաւարիւ են ինչպէս ըսի: Մեր աղնուաշնորհ հեղինակուհւոյն Տիկին Տիւսա-

րի (առ այժմ... ձեռնարկ), Սիպիլի*), Անայիսի, Ս. Զարուհիի, Արաքսի, և... Նարկիսի(?) խմբակը (անշուշտ եթէ համերաշխօրէն ընթանայ) առժամայէս պիտի կրնար բաւել: Ես այն գաղափարէն չեմ որ, պէտք է կին գրողներու սերունդ մը պատրաստել՝ որով և տարիններով սպասել՝ կանանց թիւը մը հիմնելէ առաջ, ներկայ ուժերուն համեմատութեամբ հանդէս մը կրնար օգտակար ըլլալ և յագեցող ապ մեր իգական սեռին բարոյականութեան ու մտաւորականութեան, մինչև որ սաղաքային նորոգ ուժեր և կազմաւած լայն մտքեր կարող ըլլային անհետացնել ներկայ կնոջական-գրական գործունէութեան առաջնայն ու ուղիւ:

* * *

Քանի որ առիթը ներկայացաւ, յարմար կը սեպեմ կանանց լրագրին շատ մօտիկ, աւար հետ սերտիւ շօշափուող ուրիշ ծրագրի մը վրայ ալ գաղափար մը յայտնել, ծրագրի մը զոր «Հանրագիտակ» խմբագրութիւնը յղացած է, և որուն իրականացումը ծախսով պիտի ընդունուէր մեր գեղեցիկ սեռին լուրջ մօտէն. այն է՝ «կանանց վայելչապարգտութեան բաժին» մը իւրյա ընծայել կցուած՝ կամ լրագրին և կամ առանձին, անջատ, թերթի ձեւով:

Դիւարը բաւական նոր է և սիրուն: Յայտնի է ի՞նչ, հոգն ի՞նչ մեծ համեմատութիւններ առած է մեր ո՛չ միայն ջուլ՝ այլ խոնորհ խաւերուն մէջ ալ. անոր պատճառած միտաները անհաշուելի սկսած են ըլլալ: Դժգոհութիւն, մոլութեք, վայրոյթ՝ ընտանեկան յարկերուն տակ. մեծ անօգուտ ծախքեր և... պարտքեր, որոնց հետեւանօք էրիկ կնիկն միջև վաւերական տեսարաններ շատ ան.

*) Անուանի գրագիտունէին ի դէպ ժամու կրնար, կարծեմ, նոր կարող բանաստեղծունէիներ ալ նշանակել իրիւ աշխատակից՝ կանանց թերթին համար: Այս առթիւ աւելորդ չեմ համարիր գիտել տալ թէ, հիանալի արուեստագիտունէին համար շատ սահմանափակ ու շատ ալ անյարմար կը գտնեմ իր գասարստութիւնը (Հայ. լիզու և Քերականութիւն) Եւայեան վարժարանի մէջ: Մեծ հաւատք ունենալով իր տաղանդին վրայ, մեր անկեղծ փափաքն է պինքը վարչունէի տեսնել աղջկանց տղարար վարժարանի մը, աւելի լայն ասպարէզ մը ներկայացնելով այսպէս իր ուժերուն առջեւ:

գամ, և մինչև իսկ անախորժ պայքարներ, կռիւ, ծեծ, և... ամուսնալուծում: Զո՞րն անեմ կամ զո՞րն խաւաւաւանում: Ես հոգի հաւառակող մը չըլլալով հանդերձ, միշտ նախապատուութիւն պիտի տայի վայելուչին, չափաւորին, ճաշակաւոր լեզուն: Մեր կիները շատ խելացի և շատ հեռատես բան մ'ըրած պիտի ըլլային, եթէ փոխանակ անօգուտ ու շատ անգամ ծիծաղելի նորիւնդներ (որ զիրենք երբեմն հանելուկի պէս բան մը կը գարծնէ) ետեւէն վաղելու ու մերթ... Հետեւելու, վայելուչ զգեստով, կոկիկ, ներդաշնակ արդուզարդով մը ներկայանային ամենուրեք, օրինակ առնելով այս մասին՝ պարզասէր անգլուհիներէն:

«Հանրագիտակ» ի այդ օգտակար ծրագրի մը որմէ շատեր ներշնչուած ըլլալ կը թուին, մեծ պակաս մը լրացնելու և ընտանեկան երջանկութեան սպառնացող վտանգ մը հեռացնելու ամէն բնոյթն ու հանգամանքն ունի: Կիները՝ իրենց լրագրով, «Հանրագիտակ» իր վայելչապարգտութեան բաժինով կարենոր յեղաշրջում մը պիտի կարենան յառաջ բերել մեր կնոջական աշխարհին մէջ:*) Հոգ, աստեղ մէջ, կին տարրը պիտի կրնայ իր փափաքածը գտնել. արտի մաս, մտքի մաս, հոգիի բաժին, ճաշակի էջեր, մարզանք, զբօսանք, առողջապահութիւն, — բազմակողմանի զարգացում վերջապէս: Եւ այրուրուն համար շատ հաճելի ժամանց մը պիտի ըլլայ հեռուէն կամ մօտէն գիտել... մեր կնոջական խորտումը՝ կրթական մեծ նպատակներու համար ինչպէս են աղջկանց Բարձր. վարժարանը և կանանց Լրագիրը: Փայով նոր, գեռաստի իգականութեան, ան ալ օրին մէկը յուզմամբ և երախտագիտութեամբ ցոյց տալով այդ երկու գործերը՝ պիտի ըսէ անշուշտ. «անոնք իրենց ուժէն ալ անդին անցան, հիմայ կարգը մերն է»:

ԱՄԱԹԵՕՈՒ

*) Բայց ես պիտի սիրէի՝ ինչպէս բոլոր գործնական մեծ արդիւնք սպասողները՝ որ այդ ուժերը անբաժան գործէին, միանալով և ձուլուելով լայն ու բազմաճիւղ հանդէսի մը ձեւին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԵՒ ԻՐԵՆ

ԹԵՐ ՈՒ ԴԷՄ ԹՂԹԱԿԻՑԻ

ԱՌ ՀԱՆՐԱԿԻՏԱԿ

Ա.

«Հանրագիտակ» իւր նախորդ թւով խոստացած էր Նիկոմիդիոյ Առաջնորդին նկատմամբ ընդունած թեր ու դէմ թղթակցութեանց մասին իւր կարծիքն յայտնել:

Թեր-թղթակիցք կ'ըսեն, «թէ Յովակիմեան Ստեփաննոս Սրբազան շատ բարի և շատ աւաքինի, շատ կենցաղագէտ, շատ թեմասէր, կրթասէր, եկեղեցասէր, ազգասէր, դպրոցասէր, տաղանդաւոր ու գաւառաշէն դործունեայ առաջնորդ մ'է:

Դէմ-թղթակիցք ալ կ'գրեն թէ. Նիկոմիդիոյ Առաջնորդը ազէտ է, դպրոցաց հոգի տանիր, գաւառին ուսեալ դասը՝ պէտք եղած կերպով չի յարգեր, գինով է, կրքոտ է, լոկ իր մարդերն առաջ կ'քչէ, հիները ու հարուստները, վաճառականները ու մենծ աղաները շատ կը սպառուէ:

Պոլսոյ հայ մամուլն ներկայացուցիչ թեր-թեր, իրենց թղթակիցներուն աչքովը լոկ կը դատեն Նիկոմիդիոյ Առաջնորդը:

Բանմը բանի մը նայելով բան մ'է: Նիկոմիդիոյ Առաջնորդը բաղդատելով ուրիշ գաւառի առաջնորդաց հետ, առաջնութիւնը իրելու ատրիճան գործունեայ է, վարչագէտ, տաղանդ ունեցած ու փայլեցուցած է:

Նիկոմիդիոյ Առաջնորդը ազէտ չէ. Արմաշու վարժարանէն եկած է ժառանգաւորի ուսումները շարունակելու ու աւարտելու համար Շահնաւարեանին մէջ: Բոլոր Շահնաւարեան վազեմի ու անդրանիկ աշակերտները, որք այսօր ազգին մէջ նիւթապէս թէ բարոյապէս կարեւոր դիրքերու և հասարակաց կարծիքին մէջ կ'ընտան հեղինակութեան տէրեր են, դպրոցէն գիտեն թէ՜ Պ. Սարէն* հայերէն, տաճկերէն, ֆրանսե-

* Նիկոմիդիոյ Առաջնորդ և բնիկ Նիկոմիդիացի Յովակիմեան Ստեփաննոս Սրբազանին դպրոցական անդուն է:

րէն լեզուաց հմուտ է. ժիր հեռեւոր մեզած է դպրոցին ուրիշ կարգի ամէն ուսմանց: Դպրոցի գրասեղանէն կ'ճանչեն թէ՜ Նիկոմիդիոյ Առաջնորդը եւանդաւոր ու վաւախութեամբ մ'էր արգէն:

Իւր ազգին ինչպէս կրօնական, նոյնպէս և անոր աւանդական ու պատմական զգացմանց՝ մտածմանց հանդեակը ջերմեւորեցորէն սրտաւոր, պահպանող: Մօտ 30 տարիներէ ի վեր դպրոցը թողած և Շահնաւարեան վարժարանի վերադառնալ լուսահագի ներսէն սրբազանին հետ սկսած էր Նիկոմիդիոյ թեմին մէջ իր պաշտօնավարութիւնը, և անկիւն ի վեր կը շարունակէ անյոյժողութիւն:

Նիկոմիդիոյ առաջնորդութեան մէջ Ներսէս պատրիարքին յաջորդն եղած է, անոր հոգին ու բարոյականն ունի: 40Ն աւելի գիւղեր ու գիւղաքաղաքներ կ'հովուէ. և անոնց ամէն մէկուն մէջ դպրոցներու ու եկեղեցիներու հաստեմարեր մէկ կամ աւելի հանրագումար հաստատութիւններ հիմնել իր կէտ նպատակին եղած է:

Մեր այս ըսածները անուրանալի ճշմարտութիւններ են, զորս հերքել չը տիրի կըրնան Նիկոմիդիոյ առաջնորդին լրջախոհ հասկողիքները: Ըսենք սակայն մէկ բառով թէ՜ մեր նպատակը՝ Նիկոմիդիոյ առաջնորդը սրբացնել կամ սղաշտպանել չէ, այլ իրաց վիճակը իր ճշմարտ գայներով ներկայացնել, և ցոյց տալ իր հակառակորդներուն, որ շատ սխալ քաջ մը կ'առնեն, ազգին ներկայ կուցութեան մէջ, ժողովուրդին մէջ երկխառնութեան սերմեր ցանկով:

Մարդ մը ինչ դիրքի մէջ որ ալ ըլլայ, մանաւանդ կարեւոր պաշտօնի մը տէր, իր համախոհներուն հանդէպ հակախոհներ ալ կ'ունենայ: Ասիկայ շատ բնական բան մ'է: Արդ՝ Նիկոմիդիոյ առաջնորդը, իր պաշտօնին բերմամբ և ունեցած դիրքին նկատմամբ, տարակոյս չի վերցնէր որ, իրեն հակառակորդներ ունենայ. և այդ հակառակորդներուն կարծիքն ալ իրաւացի կամ անիրաւ կրնայ ըլլալ:

Յիշենք սակայն թէ, մարդս սխալական է. և կը սխալի՝ ինչ դիրքի մէջ որ ալ ըլլայ, ինչ պաշտօնի տէր որ ալ ըլլայ, ո՛ր ատրիճան մտաւորական վարձացում ալ ունեցած ըլլայ, սա կամ նա սղաշտպան մէջ, ստիպ-

մամբ՝ և կամ մեղադրելի անտարբերութեամբ : Սակայն հանրային շահերը կը պահանջեն որ, սխալ մը որդադրելու դիտումով, ամբողջ հեղինակութիւն մը ոչնչացնելու անքաւելի յանցանք մը չի գործադրուի բռնւն բարկութեան մը թափով, վառն զի՝ ներկային համար սխալ ճանչցուած բան մը, կրնայ ապագային համար շատ նպաստաւոր արդիւնքներ յառաջ բերել . վառն զի՝ մասնաւորներու կարծիքով՝ սխալ տեսնուած գործ մը, հանրութեան համար ուղիւ և օգտակար կրնայ նկատուիլ պաշտպան և լուրջ դատողութիւնով . ուստի պէտք չէ հանրութեան շահը մասնաւորներու քմահաճոյքին զոհել :

Արդ՝ Նիկոմիդիոյ առաջնորդին նկատմամբ՝ իր հակառակորդներուն գանգաւոր լինելէ . թէ Սրբազանը՝ Նիկոմիդիոյ կրթական գործին հոգ չի տանիր, շատ անտարբեր է, և ժողովուրդը տգիտութեան մէջ կը պահէ : Ահա իրենց ամենէն զօրաւոր փաստը՝ որու կռթնած լողոք կը բառնան :

Եթէ անկողնիակալ ռզուով պիտի խօսինք, եթէ անաշատօրէն պիտի դատենք, պէտք է ըսենք որ, այդ միակ պատճառաւ, Ստեփաննոս որդաւան, արդէն քննադատելի տարբեր մը մէջ կը գտնուի : Առաջնորդի մը ամենէն նուիրական պարտականութիւնն է, իր ժողովուրդը բարոյապէս թէ մտաւորապէս զարգացնել : Բայց ստոյգ է թէ. Նիկոմիդիոյ առաջնորդը բողբոլովին դատաւարտելի անտարբերութիւնով կը վարուի իր հովուած հօտին բարոյական և մտաւոր զարգացման խնդրոյն նկատմամբ : Ահա՛ ինչդիրք :

Մենք տեսանք, ինչպէս մենէ առաջ շատեր տեսած են մեր մէջ, և նոյն խօս փորձերը ամէն օր մեզի կը ցուցնեն թէ, առանց նախնական՝ բայց հիմնական հասոյթի ազբիւրի գոյութեան, մի միայն ժողովուրդի նուիրաւորութեան անկայուն արդիւնքին վրայ հաշուելով հիմնուած բոլոր ազգային բարենպաստակ՝ և մանաւանդ կրթական ձեռնարկներ, մեծ մասամբ վաղանցուկ կեանք մ'ունեցած են ասուպի մը պէս, և մնացեալներն ալ ողորմելի ճգնաժամեր կ'անցունեն : Մեր այս ըսածներուն ճշմարտութիւնը ստացուցանելու համար հարկ չի կայ օրինակներ առաջ բերել : Լաւ չըլլա՞ր արդեօք ամէն պարագայի մէջ ալ ժողովուրդի նուիր

րատութենէն հաւաքուած ու է գումար մը իրր դրամագլուխ գործածել, և անով՝ այդպիսի բարենպաստակ հաստատութիւններու ապագան ապահովող հասութեաւոր ազբիւրներ ստեղծելով, բռն նպատակին դարձածել՝ տակաւ կամ շահը :

Եւ հիմա, քանի որ Ստեփաննոս եպիսկոպոս, իր թեմին մէջ գտնուած եկեղեցիներու և դպրոցներու համար հասութեաւոր կալուածներ կը հաստատէ, անշուշտ՝ ժողովուրդի նուիրաւորութիւններով միշտ, եթէ իրաւաւոր ըլլալ ուզենք, չը պիտի կրնանք զինքը դատաւարտել, իրեւ անտարբեր՝ իր հօտին մտաւոր և բարոյական զարգացման . և այս ալ ճշմարտութիւնն է : Միայն թէ՝ Ստեփաննոս եպիսկոպոս՝ իր հեռատեսութիւնով, եթէ մի միայն ապագան կ'ապահովէ, պէտք չէ անտեսէ նաեւ ներկան, և պատրաստէ այժմէն այնպիսի սերունդ մը, որ իր ցանածը քաղելով, անկէ օգտուելի գիտնայ : Եւ ըստ մեզ, Նիկոմիդիոյ ազգայնոց երկու կուսակիցներն ալ, եթէ համոտխոհութեամբ իրար հասկնան, անձնական կիրքեր և ամէն նկատառում զոհելով հանրային օգտին և շահուն համար, ամենէն գովելի և գնահատելի ծառայութիւնը մատուցած կ'ըլլան ազգին . մտածելով որ, երկու կուսակցութեանց բռնած ընթացքն ալ իրենց աններելի և դատաւարտելի կողմերն ունին, և շատ հաւանական է որ, շարունակութեան մէջ շատ տխուր հետեւանքներու տեսլի կրնան տալ :

Ս Կ Զ Բ Ո Ւ Ն Ք

Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԽԺԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բարեք սովորութեան՝ կամ՝ ուրիշ բաներով՝ արդի հայերէնի բառարանին դէմ

գործում ասանդուր խմբանութիւն կը
կոչուի:

Խմբանութիւնը, զոր իրաւամբ կը նշուի
մաքրութիւն, ոճը — խորհուրդի բա-
ցատրութեան նշանակը — կը մթափնէ,
կ'ազատէ հայ լեզուն, կ'ազաւանայ անոր
գոյութեան, անոր հրապոյրը կ'եղծանէ,
բնածին վայելչութիւնը կը խաթարէ, կ'որո-
վը կը չլատէ, և՛ եթէ գրողին կամ խօսողին
միտքը հասկնալի ընէ իսկ՝ ընթերցողին կամ
ունկնդիրին ուշադրութիւնը խորհարդէն ի-
րեն կը դարձնէ, և ատու գրողը կամ խո-
սողը իր նպատակէն կը վրիպեցնէ:

Խմբանութիւնը հինգ տեսակ է. 1.
Վաղնջարանութիւն, 2. Ռամկարանութիւն,
3. Գաւառարանութիւն, 4. Նորարանու-
թիւն, 5. Օտարարանութիւն:

ՎԱՂՆՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Վաղնջարանութիւն են խախտում քա-
ռերն ու ոճերը — յատկաբանութիւն — Վա-
ղնջարանութիւն են նաեւ մաքուր բառեր
երբ իրենց խախտում նշանակութիւններ
րով գործածուին:

Մեր սոսկեգրիչ նախնիքներու մատենա-
գրութիւնը ընթերցողներէն ոմանք գոցե-
ցալին, թէ այդ մատենագրութեան մէջ գոր-
ծածուած բառերէն և ոճերէն մաս մը արդի
սերունդին բառարանէն դուրս ձգուած է,
բայց պէտք է գիտնալ որ այդ բառերուն
արդի գրականութենէ վտարում ըլլալու
իրողութիւնը կը ցուցնէ թէ ատոնք պիտանի
չեն այլ եւս: Իրենց ասանդը որքան ալ պատ-
ուական եղած ըլլան ատոնք, խմբանու-
թիւններ են հիմա: Լեզուն մարդուն հա-
մար ստեղծուեցաւ, ո՛չ թէ մարդը լեզուն
համար:

Ուստի՝ այն բառերը՝ որոնք այլ եւս կարող
չեն իբր հաղորդակցութեան միջոց ծառայու-
թիւն մատուցանել՝ քարի բայց զառամեալ
ծառայի մը պէս իրաւունք ունին հանգչելու:

Բառերը, իրերու պէս, քիչ արժէք ու-
նին երբ ազդեցութիւնն իրանցեն: Դարձ-
եալ՝ բառի մը անգործածելիութիւնը ան-
խուսափելի է, երբ իր անուանած առարկան
այլ եւս չի գործածուիր:

Իրաւ է որ հին բառեր վեհութիւն կու
տան քերթումին, ինչպէս որ պաշտօնա-

կան զգեստները՝ անձին. բայց սովորական
առիթներու մէջ անոնց կիրառումը անպատ-
շաճ է: Անոնք որ՝ խափանում բառեր կը
գործածեն արդի սովորութիւնը չի գիտնալ-
նուն համար՝ տգիտութիւն կը յայտնեն, ա-
նոնք որ՝ արդի սովորութիւնը գիտեն ու կը
մերժեն անոր հետեւիլ: արուեստակութիւն
կը գործեն:

ՌԱՄԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ռամկարանութիւն են ռամկական ոճեր և
բարեք սովորութիւնով վաւերացեալ բառե-
րու սղեալ և աղաւաղ կամ խանգարեալ
ձեւեր:

Ռամկարանութիւններէն ոմանք, հակա-
ռակ իրենց դէմ մղուած բուռն պայքարին,
իրենց կարճութեան ու զիւրահնչութեան
չնորհիւ՝ վերջապէս յաջողեցան լեզուն մէջ
տեղաւորուիլ: Այս կարգէն են՝ Ելիւ, Խիւ, Ե-
նալ, Երիւն:

Կան ռամկարանութիւններ որոնք լեզուն
մէջ հաստատուած են իրենց հարազատներէն
տարբեր նշանակութիւնով: Այս կարգէն են
— փեր և Էրեր բառերը:

ԳԱՒԱՌԱՐԱՆՈՒԹԻՒՆ


Գաւառարանութիւն կը կոչուին տեղա-
կան սահմային բարբառներու մէջ երեւցող
բառեր՝ որոնք գրականութեան մէջ տեղա-
ւորուած չեն:

Գաւառարարառները, որոնցմէ մեծաւել
օգտուած են մեր բառագիրները, լեզուա-
կան անհուն գանձ ունին իրենց մէջ: Անոնք
անտարակոյս պիտի հայթայթեն բառեր ո-
րոնք լեզուն մէջ պէտք մը լեցնելու ծա-
ռայեն և բարեք գործածութեան բերուին:
սակայն կարող անձերու գործ է այդ բա-
ռերը ընտրել և գործածութիւնով վաւե-
րացնել:

Ե-ր.

Պարտիզակ

Ս. Մ. Գաւառ



ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՏՆՂԱԿԱՆ ՍԵՐԻ (շարժ)

Հարց № 89 և պատասխան

— 0 —

Կիւմիւզեան Օհաննէս էֆ. կը փափաքի հասկնալ թէ, տեղական սերը ինչպէս կը պատրաստեն:

Տեղական սերի պատրաստութեան համար անպատճառ պէտք է դարձածել գոմէշի, կամ մաքիի կաթ. կովու և այծի կաթերը անյարմար են, սա պատճառաւ որ, առաջինները իրենց մէջ կը պարունակեն 3—4 առ հարիւր պարարային նիւթեր, մինչդեռ վերջինները 7—8 առ հարիւր:

Կաթը եփելու համար գործածուած տապակները սղնձակերտ խոշոր ափսէներ են, որոնց եզերքը մատուորապէս 10—12 հար. մեզր բարձրութիւն կ'ունենայ, և իրենց մէջ կը պարունակեն վեր ի վերայ 25—30 քաշ կաթ:

Ափսէները՝ իրենց տրամագծին մեծութեան համաձայն շինուած թուաներու (օճաք) վրայ կը զետեղեն. կաթը առաւօտուն կ'իջնէ վերջը, պարզուտէ կ'անցունեն, և կը լեցնեն անոնց մէջ՝ բերնէն 3—4 հար. մեզր վար. փայտով բոցարձակ կրակ կը վառեն, և կը տաքցնեն կաթը, որ շարունակ գաւազանով մը կը խառնեն: Երբ կաթը եռալով փրփրիլ սկսի, և բարձրանայ այն աստիճան՝ որ բերնէն դուրս թափելու վիճակին մէջ գտնուի, այն ատեն կէս քաշ կամ 300 արամի չափ պաղ ջուր կը սրսկեն շուտով կաթին վրայ, և ափսէին տակէն կրակը քաշելով, կը թողուն այդպէս, մինչեւ որ երեսը բարակ խաւ մը կապէ. այն ատեն բերանը բարակ և սուր դանակով մը, ափսէին եզերքներէն կը դատեն այդ խաւը մինչեւ չըջանակին կէսը՝ 2 հար. մեզր խորութեամբ՝ իսկ միւս կէսը առանց զատելու կը թողուն: Այս դանակով զատելու գործը վերջնալ մէկ քանի անգամ կը կրկնեն, մինչեւ որ պաղելով երեսը կապած սերը հաստընայ, որ կը տեսնուի մօտաւորապէս 3 ժամ: Այդ միջոցին, երբ սերը ամբողջովին պաղած է, դանակով անջատուած

մասին տակը նորէն կրակ կը վառեն. բայց այս անգամ կրակը պէտք չէ նախորդին պէս ուժով վառի. այնպէս որ, սերին տակը գտնուած կաթը առանց եռալու տաքնայ, և մինչեւ 80—90 աստիճան բարեխառնութեան հասնի: Այս վիճակին մէջ, սերը՝ ափսէին եզերքներէն անջատուած կ'սկսի կը սկսի կծկելով ինքնիր վրայ ժողովիլ, և երեսն ալ կը քրտնի: Այս քրտնիքի կաթ լինելը տեսնուելուն պէս, խոյն կրակը տակէն կը քաշեն, և կը թողուն մինչեւ 10 ժամ այդ վիճակին մէջ. ուրիշ ետքը, կտրուելով, մէն մի մաս ինքնիր վրայ կը գալարեն, և կուտան խողովակի մը ձեւը, որ կը կոչուի չիլէ գայմաղը:

Ահաւորիկ այժմ, թէ ինչպէս մատերու կը բաժնեն սերը, երբ տակաւին ափսէին մէջ է:

Սերը՝ ափսէին եզերքէն զատուած կողմէն սկսելով, սուր դանակով մը, վերէն վար երկայն շերտերու կը բաժնեն, 10 կամ 15 հար. մեզր լայնութեամբ. այս շերտերն ալ, իրենց կարգին, մէկ քանի կտորներու կը վերածեն, այնպէս որ՝ իւրաքանչիւրը 10 կամ 15 հար. մեզր քառակուսի տարածութիւն ունենայ: Երբ այսպէս կտորները պատրաստուած ըլլան, այն ատեն, երկու ձեւաց միջամատերով կտորներէն մէկուն երկու ծայրերուն վրայ կը կոխեն, որով, սերին կտորը երկու ծայրէն կաթին մէջ կը մխրձիլ, մինչդեռ մէջքը գոգաւորելով վեր կը բարձրանայ, որ տանի թեթեւօրէն կ'որցած այդ կտորը, կաթին մէջէն դուրս կ'առնեն, և մատներով երկու ծայրերը իրարու վրայ բերելով, սովորական խողովակի ձեւը կուտան, և կը զետեղեն մեծ կակ պնակի մը եզերքը, մէկ ծայրը պնակէն քիչ մը դուրս, և մնացեալը պնակին մէջ. այսպէս դրուելուն պատճառը՝ կըրցած սերին մէջ գտնուած քիչ մը կաթը թորթորելով, ցամքեցնելու համար է:

Ինչպէս վերը ըսինք, մինչեւ ցարդ տեղացիք չեն կրցած կովու կաթով սեր պատրաստել, բայց մենք, կատարելապէս յաջողած ենք կեդրոնախոյս սերմզանի (écrémeuse centrifuge) միջոցով, և պատրաստուած սերը, փոխանակ կ'որցնելով խողովակներու վերածելու, մատնաւոր կաղապարներու մէջ, այլ և այլ ձեւերով ձուլած ենք:

Կովու կաթով պատրաստուած սերը խիտ նրբաբոյր և փափկահամ կ'ըլլայ :

Տեղական դրութիւնով, գոմէշի կաթին 1 քաշէն կ'առնեն միջին հաշուով 75 տրամ : ձմեռը . խի ամառը հազիւ թէ 50 տրամ :

Ղ. ԲՈՂԱՏ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Շաբ. թիւ 58 Էն)

ԵՐԿՐՈՐԴ ՄՈՒՐԱՐԿՈՒՄ .— Թէեւ նախորդ գործողութիւնով պարարային նիւթերը մեծ մասամբ կը վտարուին պատտառներուն վրայէն , բայց անոնց թթւութեանը հիւսկէններուն վրայ կառչած կը մնան տակաւին . ուստի հարկ կ'ըլլայ այս պարագային մոխրակը (պուզատայ) կրկնել :

Բայց հոս՝ փոխանակ կիրի՝ կը գործածեն նատրոն (սոսա), կիզողական նատրոն (սուտ գօսթիք), և ռետին (ռէշինա) : Գործողութիւնը կը կատարուի հետեւեալ կերպով :

Պատտառները կը պետեղեն եփոցի կաթնային մէջ (ինչպէս կիրի մոխրակի տակէն), 100 քիլո պատտառի համար 1 ու կէս քիլոի չափ նատրոն՝ ջուրի մէջ լուծելով, ալքալալուրը կը պատրաստեն . բայց ինչպէս ըսած ենք, այս չափերուն վտանգելու չէ, լուծալուրը պատրաստելէն վերջ, իր խտութիւնը չափելու է, որ Պոմէի հեղկաշափով պէտք է նշանակէ 1 աստիճան :

Լուծալուրը կը լեցնեն կաթնային մէջ, և երեք ժամ կ'եփեն եռացնելով : Յետոյ կը պատրաստեն երկրորդ ալքալալուր մը աւելի զօրաւոր . նախորդ լուծալուրը կը հոսեցնեն, կաթնային մէջ անգամ մը կը լուան, և կը լեցնեն վրան անմիջապէս նոր ալքալալուրը՝ որ հետեւեալ կերպով կը բազադրեն :

100 քաշ պատտառի համար կը գործածեն

3 ու կէս քաշ նատրոնի բնածխաա . 800 կաւի կիզողական նատրոն (սուտ գօսթիք) և 1 քիլո 600 կաւի ռետին (ռէշինա) . գործողութիւնը կը կատարեն հետեւեալ կերպով :

Ոմանք տաքին ալքալալուրը չեն պարպեր, այլ 3 ժամ եռացնելէ վերջը, վրան կը յաւելուն միւս բազադրութիւնները . ուրիշներ՝ մանաւանդ եթէ պատտառները հաստ և խիտ անկուած ըլլան, լուծալուրը կը փոխեն . այս առթիւ վերը յիշուած ռետինի քանակին չափ նատրոն մէկ կողմ կը դնեն, մնացեալը կիզողական նատրոնին հետ մէկտեղ կը լուծեն ջուրի մէջ, զոր կաթնային մէջ լեցնելով, կ'սկսին եռացնել մոխրակը . այդ միջոցին ռետինը և պատտառ նատրոնը ջուրի մէջ դնելով 2—3 ժամ կ'եռացնեն . յետոյ ամբողջովին մոխրակին վրայ կը լեցնեն, և եռացումը կը շարունակեն մինչեւ 12 ժամ . որ տակէն երրորդ անգամ մ'ալ նատրոնի յաւելում մը կ'ընեն կաթնային մէջ, և եռացումը կը շարունակեն տակաւին մինչեւ 3 ժամ : Նատրոնի այս վերջին յաւելումը հաւատար է, պատտառի իւրաքանչիւր 100 քիլոյին համար 1 քիլո 600 կաւի : Մոխրակի եփոցը լրանալէն անմիջապէս վերջը կը լուան պատտառները կաթնային մէջ . բայց այս անգամ փոխանակ պուզ ջուրի, պէտք է հոսեցնել պատտառներուն վրայ տաք ջուր, որովհետեւ՝ այս պարագային՝ պուզ ջուրը ռետինը պաղեցնելով, պատտառի հիւսկէնին կը փակցունէ : Երբ ալքալալուրը ամբողջովին վտարուի կաթնային, այն տակէն տաք ջուրը դադարեցնելով, տեղը կը հոսեցնեն պուզ ջուր :

Այս ալքալալուրը ընդհանրապէս չեն թափեր, այլ գտա կարամներու մէջ կը պահեն, և երկրորդ մոխրակի համար փոխանակ նոր ալքալալուր պատրաստելու, տաքին գործողութիւնը՝ նախապէս գործածուած ռետնային ալքալալուրով կը կատարեն :

Ռետնային ալքալալուրով մոխրակը (պուզատայ) կը գործածուի մասնաւորապէս տալածոյի սահմանուած պատտառներու համար, և ինչպէս տեսանք, մանածները պէտք չունին այս բազադրութեան, և ոչ ալ ճերմակ պատտառները (խառտա) :

Ռետնային մոխրակէն վերջը հարկ է անգամ մ'եւս պարզ նատրոնջուրի մոխրակ մը տալ, վստահ ըլլալու համար որ, ամբողջ

ջուրին պարարային նիւթերը վտարուած են, և եթէ ու է պատճառով ալ տեղ տեղ ուտին միացած է, անոնք ալ հալելով կ'անցնին կ'երթան, որով և գործողութիւնը կատարեալ կ'ըլլայ:

Այս վերջի մոխրարկին համար իւրաքանչիւր 100 քիւս պատառի համար կը գործածեն 1 քիւս 600 կում նատրոն (սոսա). 3 ժամ կ'եռացնեն, յետոյ պաղ ջրով կը լուան կաթնային մէջ, կը հանեն և ցայելու մեքենայով աղէկ մը կը ցայեն:

Մոխրարկը այս կերպով լրացած կ'ըլլայ, ուրիշ անմիջապէս վերջ բուն ճերմկեղնելու գործողութեան կ'ենթարկեն պատառները, որ ինչպէս գիտենք, քլորարկումն է:

Մոխրարկի գործողութիւնը լրանալէն վերջ, տակաւին պատառները թեթեւագէտ դեղնագոյն կ'ըլլան. քլորարկումի բուն նպատակը ահա՝ այդ դեղնութիւնը առնելով կատարեալ ճերմկութիւն մը տալն է:

Քլորարկումի գործողութիւնը կը կատարուի մանածներուն պէս, նոյն դրութեամբ շինուած կարամներու մէջ, և կը տեւէ 5 ժամ: Առաջին անգամ պատառները կը զետեղեն կարասին մէջ. ջրհանը կը բանեցնեն, քլորջուրը վեր հանելով կը տարածեն պատառներուն վրայ, կը թողուն այդպէս ժամ մը. յետոյ կը բանան յատակի ծորակը և կը հոսեցնեն քլորջուրը. քլորաչափով կը փորձեն, և պակասը կ'ամբողջացնեն վրան՝ նոր կիրի քլորուկ աւելցնելով. երկրորդ անգամ ջրհանով վեր կ'առնեն, և կը տարածեն կրկին պատառներուն վրայ. կը թողուն այդպէս ժամ մը, և ծորակը բանալով կը պարպեն. քլորջուրի ուժը կը չափեն, պակասը կ'ամբողջացնեն, և կրկին ջրհանով վեր առնելով պատառներուն վրայ կը տարածեն, և կը թողուն այդպէս 3 ժամու չափ:

Ոմանք գործողութիւնը շարունակական կ'ընեն. այսինքն, կարասին յատակը գլորուած ծորակը միշտ բաց թողլով, ջրհանը անդադար կը բանեցնեն մինչեւ 5 ժամ. և այդ միջոցին՝ մերթ Եւրէ մերթ քլորջուրը փորձելով, պակասը շարունակ կ'ամբողջացնեն:

Քլորջուրի խտութիւնը սլետք է հաւասար ըլլայ Պոմէի մէկ չորրորդէն՝ կէս աստիճանին, կամ խտաչափով՝ 1,00125էն 1,0025:

Ուշադրութիւն ընելու է որ քլորջուրին մէջ չի լուծուած կիրի քլորուկի մասնիկներ չի գտնուին, որոնք պատառներուն կառչելով, այնտեղուանքը կայրեն կը փտեցնեն:

Քլորարկումի գործողութիւնէն վերջը պատառները կարասէն դուրս կը հանեն և մէկ քանի ժամեր կը թողուն բաց օդին՝ լուալէ առաջ. յետոյ պարզ լուացք մը կու տան և կ'ենթարկեն թթւարկումի գործողութեան՝ ճիշդ մանածներուն պէս, որ կը տեւէ 3 ժամու չափ. սպիտակացուցման գործողութիւնը կը լրանայ վերջնական լուացքով մը:

Այս վերջին լուացքը սլետք է կատարել խիստ խնամով, որպէս զի օտար նիւթեր չի մնան պատառներուն վրայ: Լուացքէն վերջը կը քամեն և կը չորցնեն:

Տպածոներու սահմանուած պատառներու սպիտակացուցման գործողութիւնը կը տեւէ 4 օրի չափ: Բայց 1885էն ի վեր Մաթր և Բլաթ կատարելագործեալ մեքենաներ հնարեւով, թէ գործողութեան տեւողութիւնը, և թէ գործածուած նիւթերը զգալապէս նուազած են:

ՍՊԻՏԱԿԱՅՈՒՄ ԹՐՔԱԿԱՆ ԿԱՐՄԻՐԻ ՀԱՄԱՐ.—Եթէ պատառները թրքական կարմիր ներկուելու պիտի սահմանուին, այն ատեն ճերմկեղնելու գործողութեանց մէջ մասնաւոր փոփոխութիւններ տեղի կ'ունենան:

Խանձումի և քլորարկումի գործողութիւնները միասակար կը նկատուին այս պարագային, և հետեւաբար կը ջնջեն ատոնք: Գործածուած գործիքները միեւնոյնը մնալով, կ'ենթարկեն հետագայ գործողութիւններուն:

Ա.—Լուացք:

Բ.—Եփոց՝ ջուրի մէջ 2 ժամ. կը վերջացնեն ցայելով:

Գ.—Մոխրարկ.—100 քիւս պատառի համար 4 ու կէս լիթրա կիզողական նատրոն (խտութիւն=1,35) դնելով 10 ժամ եփոց կը դնեն, յետոյ կը լուան, կը ցայեն:

Դ.—Երկրորդ մոխրարկ.—100 քիւս պատառի համար 3 ու կէս լիթրա կիզողական նատրոն (խտութիւն=1,35), 10 ժամ եփոց, յետոյ լուացք և ցայում:

Ե.—Թթւարկում.—Մծմբական թթւութիւն լուծալու (խտութիւն 1,01). 2 ժամ լուացք:

2. — Խնամով լուսով, ցայել և չորցնել:

ՍՊԻՏԱԿԱՑՈՒՄ ՃԵՐՄԱԿ ՊԱՍՏԱՌՆԵՐՈՒ:

— Այս կարգի պատճառները, որ չը պիտի ներկայեն, ճերմկեցնելու գործողութեան մէջ ռեանային ալքալալուրի ազդեցութեան չեն ենթարկուիր, բոլոր միւս գործողութիւնները նոյնը կը մնան տպածոներու սպիտակացուման նման. միայն թէ՛ չափ մը ներկարարներ քլորարկուած գործողութիւնը կը կատարեն երկու մոխրարկի մէջտեղը՝ յոստանակ վերջը ընելու. գործողութիւնը լրանալէն վերջը, կը լրջտեն (չիփալէմէք) և այնպէս կը չորցնեն:

Ղ. ԲՈՂԱՏ

ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Հին ՊԶԻՆՁՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Հարցում թիւ 90 և պատասխան

— 0 —

Երկնայէն Յ. Յ. Տմարեան էֆ. կը հարցնէ թէ, չանագազօծուած պղնձէ անոթները երբ խոնաւութենէ ժանգոտին, լինչպէս մաքրելու է:

Ահաւասիկ երկու միջոցներ:

Ա. — Մէկ լիթր անուշ ջուրի մէջ հալեցուցէք 30 կուամ թրթնջական թթւում (acide oxalique = ասիտ օքսալիք): Ուրիշ տմանի մը մէջ ալ իրար խառնեցէք, իսկոյն բարակ մաղէ անցուած, 4 տպարի դգալ ձերմակ փայտի փոշի (զոր օր. բարտիլ = գոփաք), 3 դգալ ալբոյ, և երկու դգալ բեւեկինի խոկութիւն (թրթ մէնթի բուհու): Միացուցէք երկու բաղադրութիւնները իրարու, աղէկ մը շիշը ցնցելով:

Այս բաղադրութիւնը երկար շառններ կրնայ պահուիլ, եթէ շիշին բերանը լաւ խցուած ըլլայ. բայց պէտք է վրան թուղթ մը փակցնել և գրել, որպէս զի՝ սխալմամբ ուրիշ ու է հեղուկի մը տեղ չառնուի, որովհետեւ թունաւոր է, և մեծ վտանգներ կրնայ պատճառել:

Գործածուած տառն պէտք է շիշը ցնցել. բերանը բանալով, մաքրուելիք առարկային վրայ տեղ տեղ կաթեցնելով, ստուի կտուրով մը կը շիշեն. յետոյ փոշիացած կաթնով վրայէն շիշելով կը փայլեցնեն:

Բ. — Աւէք՝

Ջուր	500 կուամ
Արարիկ օճառ (արապ սապունը)	60 »
Թրթիւր	100 »
Ալբոյ	60 »
Բեւեկինի խոկութիւն	100 »
Ձէթ	50 »

Ջուրը եռացուցէք, օճառը մէջը խառնելով հալեցուցէք, ու լեցուցէք շիշի մը մէջ. թրթիւրին իսկոյն բարակ մաղէ անցուցէք և միւս նիւթ երուն հետ խառնեցէք վերի օճառջուրին, շիշը լաւ մը ցնցեցէք, բերանը ամրապէս գոցեցէք, և պահեցէք:

Գործածութեան եղանակը ճիշդ նախորդին պէս. թէեւ վերջը կաթնով շիշիէք ալ կ'ըլլայ:

ՓՂՈՍԻՐԷ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Հարցում թիւ 91 և պատասխան

— 0 —

Յ. Խաղուէտն էֆ. կը հարցնէ մեզ թէ, փղտիկեայ առարկաները լինչպէս մաքրելու է, երբ անոնք աղտոտելով սեւնան, զոր օրինակ դաշնակի մասները, սանտրեր ևն. ևն:

— 0 —

Ա. — Նախ վրայի պարտուտ (եալլը) տպարը հանելու է, ալբոյի կամ կնդրիաի (պանգին) մէջ թաթխուած լաթով մը շիշելով. յետոյ՝ ուրիշ լաթ մը՝ թթւածինացեալ ջուրի (eau oxygénée = օքսիթէնէ) մէջ թաթխելով, մէկ քանի րոպեով շիշելու է: Թթւածինացեալ ջուրը՝ զոր պատրաստ կը ծախեն գեղազարդները, պէտք է 10 առ հարիւր համեմատութեամբ գործածել, այսինքն՝ 100 տրամ պարզ ջուրի մէջ՝ 10 տրամ:

Այս խառնուրդը երբ քսէք անգամ մը վրան, քառորդ ժամու չափ սպասելու էք և այնպէս շիշելու էք երկրորդ անգամ թաթխելով լաթը. և կրկնելու էք այսպէս շա-

լունակարար մէկ քանի անգամներ, մինչեւ որ կատարեալ ձերմկութիւն մ'ստանայ:

Բ.—Նախորդին պէս աղտերը հանեցէք, յետոյ ջրախառն ծծմբական թթւաւորով (100 տրամ ջուրին մէջ 2-3 տրամ զած եաղի) շփեցէք մէկ քանի անգամներ:

Զորացեա՛մ ատեննիդ պէտք է կաւիճի բարակ փաշիով շփել:

Ղ. ԲՈՂԱՏ

ԽՈՇԱՆՈՅԻ ԲԱԺԻՆԸ

ԿԱՆԿԱՌԻ ՏԱՊԿԱՄ

8—10 հատ կանխառ առէք, աղէկ մը ստկեցէք, անանկ որ միայն միջուկը մնայ. կիսեցէք, ջրով խաշեցէք, պարզոցի (քէվկիր) մը մէջ դրէք, որ թորթորի (սիւզմիւշ Եւլայ): Յետոյ, մի առ մի՝ նախապէս փրփրցուած հաւկիթի մէջ թաթխեցէք, և անկէ առնելով ծեծած պաքսիմատի (կալէթա) մէջ կրկին թաթխելով կարագ կամ դմակ լւզի մէջ սապկեցէք:

ԿԱՆԿԱՌԻ ԽՃՈՂԱԿ (ՏՕԼՄԱ)

Ձեր պէտքին համեմատ միա առէք, ջիւղերը գտնեցէք, ու աղէկ մը ծեծեցէք, յետոյ քանի մը հատ խաշած գետնախնձորով և մէկ քանի հատ հաւկիթով շաւրեցէք:

Քիչ մը խիստ մանր ջարդուած ազատդեղ, պիստակ, աղ պղպեղ աւելցուցէք, նորէն շաւրեցէք ու թողուցէք այսպէս 2 Ժամ:

Առէք այժմ՝ պէտք եղածին չափ կանխառ, ստկեցէք, լուացէք և մէջուկը փորեցէք առանց կիսելու, լեցուցէք խրաքանչիւրին մէջ՝ վերի պատրաստութիւնը. մի առ մի շարեցէք սանի մը մէջ, աւելցուցէք խլրտ մի ջուր, անանկ որ երեսը ծածկէ. և կամայ կրակի վրայ եփեցէք: (Եթէ այդ մանր ջուրը քաշէ ու տակաւին եփել պէտք Եւլայ՝ կրկին մանր ջուր աւելցնելու է): Եփելէն վերջը՝ սանը մաղմաղ կրակի վրայ դնելով խուփը (խափախ) քիչ մը լաց թողուցէք:

ԿԱՌՈՎ ՀԱԽԻԹ

Գոգաւոր պնակի մը մէջ 4 հաւկիթ կտայեցէք, աւելցուցէք վրան՝ 50 տրամ փաշալցած շաքար, կէս քաշ կաթ, պղպեղ մը աղ, և քերոցէ անցուած նարնջի մը արտակելու: Յետոյ պատառաքաղով մը գարկէք. անանկ որ, աղէկ մը խրար խառնուին, և լեցուցէք գոգաւոր պնակի մը մէջ:

Քիչ մը մեծ կակ սանի մէջ ջուր դնելով եռացուցէք, ու պնակին վրայ երկաթէ թիթեղ մը ծածկելով, ջուրին մէջ նստեցուցէք. թիթեղին վրայ կրակ լեցուցէք և սանը կրակին վրայ դնելով 20 վայրկեանի չափ եփեցէք: Յետոյ լացէք բերանը, եթէ տակաւին թանձրացած չէ, քիչ մ'եւս եփեցէք, լաց, ուշադրութիւն ըրէք որ տակը չառնէ: Եփելէն վերջ վար առէք կրակէն և թողուցէք որ սաղի, վրան փաշալցած շաքար ցանեցէք, ու տաքութեամբ կարմրցած հրաթի մը (աթէշ քիւրէյի) պտտցուցէք, որ շաքարը բլբլեղանայ:

ՊԱԼԱՏԱԿԱՆ ԽՈՐՏԻԿ

Հորթի աղբրի կողմէն առնելով սակորնեքը հանեցէք, մի առ մի խողի ճարպի մէջ թաթխեցէք և սանի մը մէջ լեցուցէք. շերտի (քեփշէ) մը մանր ջուրով եփեցէք մինչեւ որ այդ ջուրը քաշէ, սակայն միշտ խառնելու է որ սանին չի փակի. և աւելցուցէք յետոյ 3 շերտի ևս մանր ջուր, և աղ ու պղպեղ. սանը մաղմաղ կրակի վրայ դնելով՝ քթքթցուցէք, սանին խուփը քիչ մը լաց ձգեցէք, և երկաթեայ թիթեղը խուփին վրայ դնելով՝ մաղմաղ կրակով ծածկեցէք: Երբեմն բերանը բանալով մանր ջուրով թրջեցէք, որ երեսը մակրէր: Եւ տապ ծակոտկէն շերտիով միտերը պնակի մը մէջ դնելով՝ ջուրը քամոցէ անցուցէք, և մանր վրայ լեցուցէք. թրթնջակի (գուգու քուլայը) կարնիթիւր Պէ՛ք քովը, տաք տաք հրամցուցէք:

ԹԹԵՆՁՈՒԿԻ ԿԱՐՆԻԹԻԹ

500 տրամ թրթնջակ առէք, կոթերը կարտեցէք. լուացէք, պարզոցէ անցուցէք.

300 տրամ ջուրով խաշեցէք՝ պտղունց մը աղ նետելով վրան։ մէկ քառորդ ժամ եռացուցէք, փայտէ դգալով մը խառնելով։ վար առէք, պարզուցէ անցուցէք, տախտակի մը վրայ լեցուցէք և մանր մանր ջարդեցէք։ սանի մը մէջ դնելով 3 վայրկեանի չափ խորովեցէք։ Ուրիշ սանի մը մէջ դրէք 20 տրամ ալիւր, 25 տրամ կարագ, և 3—4 վայրկեան խորովեցէք։ Թրճնջուկը վրան աւելցունելով՝ 20 վայրկեան եփեցէք, և սանը վար չառած՝ 50 տրամ մսի ջուր լեցուցնելով (բայց մաս առ մաս) չարունակ խառնեցէք։ Գոգաւոր պնակի մը մէջ 3 հաւկիթ կտորեցէք, քիչ մ'աղ սերուց (քոֆմա) աւելցնելով՝ մէկ քառորդ ժամ զարկէք, թրթնջուկին վրայ լեցուցնելով՝ սանը կրակին վրայ դրէք, և 5 վայրկեան չարունակ խառնելով եփեցէք։

ՈՉԽԱՐԻ ԽՈՐՏԻԿ

Ոչխարի ազդրի կողմէն տանելով՝ ոսկորները զտեցէք։ քիչ մը ջարդուած ազատգեղ, կարտա, 4—5 չերեփ ջուր, մէկ մանրուած սոխ, 2 հատ մեխակ, 50 տրամ ստեպղին, քիչ մը աղ և պղպեղ աւելցնելով խաշեցէք, քամոցէ անցուցէք, միտը ծանրութեան մը տակ դրէք որ ճնշուի։ Պաղելէն վերջը, սուր դանակով մը 5—6 կտորներու բաժնեցէք, հալած կարագ լաղի ու յետոյ պաքսիմաթի թաթիւնցէք խրաքանչիւր կտորը ու կասկարեցէք։ Կրնաք աւելցնել վրան լոլիկի թացան, կամ ծմելի (սպաննաք) կարնեթիւր ևլն։

ՏԱՆՏԻԿԻՆԸ

Վ Ր Ի Պ Ա Կ

Հանրագիտակի նախորդ թւոյն, 919 էջին Ա. սիւնակին 45րդ տողին մէջ «վանահայր-վերացեալին» բառը պէտք է կարդալ «վանահայր-վերատեսչին», որ տպագրական սխալի մը արդիւնքն է։

ԾԱԽԼ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Ասղած մնացի, Բերանս չէր բացուեր խօսելու։ Երթունքներս հաղիւ սա բառերը կրցին արտաբերել։

«Պիտի մեկնի՞նք ուրեմն։

—Այո՛, աղորմի՛ր՝ սղայ, և դուն չըջաջայելու կ'եղես փոխանակ տունը կենալու։

—Պիտի մեկնի՞նք, կրկնեցի տկարացած ձայնով մը։

—Այո՛, վաղը չէ միւս օր, առաւօտեան ժամը մէկին։»

Չկրցի ա՛լ աւելի մօտիկ ընել ու սենեակս խոյս տուի։

Տարակուսելու տեղի չկար. մօրեղբայրս կէս օրէն ետքը զբաղեցաւ ճամբորդութեան համար անհրաժեշտ նկատուած մէկ քանի առարկաներ և գործիքներ ձարելու և պատրաստելու։ Նրբանցքը խճուղած էր չուանէ հանգուցաւոր սանդուխներով, ջահերով, անամէջ դգմակներով, երկաթէ ակիչներով, քարկոթի սրածայր մուճերով, երկաթ ապաստ գուազաններով, բրնձներով, ևլն. ևլն. որոնք տասը մարդու բեռ կ'ըլլային առ նուազն։

Ահաւրի գիշեր մը անցուցի։ Յաջորդ օրը՝ առտուն կանուխ լսեցի որ զիս կը կանչեն։ Որոշած էի սենեակիս դուռը չբանալ։ Բայց կարելի՞ էր դիմադրել այն քաղցր ձայնին որ կ'ըսէր. «սիրելիս Աքսէ՛լ»։

Սենեակէս դուրս ելայ։ Կը խորհէի թէ այլայլած կերպարանքս, աժգունութիւնս, անքնութենէ կարտած աչքերս ազդեցութիւն պիտի գործէին թերեւս Կրտսւպէնի վրայ, և իր դաղափարները փոխել տային։

«Ա՛հ, սիրելի՛ս Աքսէ՛լ, այսօր աւելի լաւ կը տեսնեմ քեզ. գիշերը հանդարտեցուցեր է քեզ։

—Հանդարտեցուցեր է մի՛, գոչեցի։

Հայելիիս առջեւ վազեցի, և իրօք ալ

կարծած իս չափ գէշ կերպարանք մը չունէի։ Անհաւատալի՜ բան։

«Աքսէ՛լ, ըսաւ Կրախապէն, երկար խօսակցութիւն մ'ունեցայ խնամակալիս հետ։ Յանդուգն գիտուն մը ու շատ քաջասիրտ մարդ մըն է ան. և պէտք է ի նկատի առնեմ որ, իր արիւնքը քու երակներուդ մէջ կը հոսի։ Պատմեց ինծի՝ իր ծրագրերէն, իր յայտերը, թէ ինչո՛ւ և ի՛նչպէ՛ս կը յուսայ իր նպատակին հասնիլ։ Եւ պիտի յաջողի, ես չեմ տարակուսիր։ Ա՛հ սիրելի՛ս Աքսէլ, որչափ գեղեցիկ բան է այդպէս ինքզինքը գիտութեան նուիրել։ Ի՛նչ մեծ փառք պիտի չահի Պ. Լիտնեպօք, որուն մասնակից պիտի ըլլայ նաեւ իր ուղեկիցը՝ Վերադարձին, Աքսէլ մարդ մը պիտի ըլլատ, իրեն հաւատարմարդ մը. ազատ՝ խօսելու, ազատ՝ գործելու և վերջապէս ազատ՝...»

Նորատի ալջիկը չիկնելով չկրցաւ խօսքը աւարտել։ Իր խօսքերը կ'ողակտէին զիս։ Սակայն դեռ չէի ուզեր հաւատալ թէ պիտի մեկնէինք։ Կրախապէնը բրօքէսէօրին սենեակը տարի։

«Մօրեղբայր, ըսի, ուրեմն ա՛լ որոշուած է թէ պիտի մեկնէնք։

— Ի՛նչպէ՛ս, կը տարակուսի՞ս։

— Ո՛չ, ըսի, իրեն հակառակած չորայու համար։ Միայն կ'ուզէի հասկնալ թէ ի՛նչ բան կը ստիպէ գմեղ ա՛յսքան տճապարկելու։

— Բայց ժամանակը, ժամանակը, որ անգուանայի կերպով խոյս կու տայ։

— Բայց մայիսի 26ն է այսօր, և մինչեւ յունիսի վերջը...

— Է՛հ, տգէ՛տ դուն ալ, կը կարծես թէ դիւրութեամբ իսլանտա կ'երթցուի։ Եթէ խենթի մը պէս զիս թողլով դուրս ելած չըլլայիր, Գորէնհակի Լիֆէնտէր և ընկ. գործակալութեան գրասենեակը պիտի տանէի քեզ, և հո՛ն պիտի տեսնէիր որ Գորէնհակէն Ռէյքեալիք մէկ անգամ միայն երթեալութիւն կայ։

— Է՛հ ուրեմն։

— Է՛հ ուրեմն, եթէ յունիս 22ին սպասեմք, շատ ուշ պիտի մնանք, և չը պիտի կրնանք տեսնել Սնէֆէլսի խառնարանը գգուող Աքարդարիսի ստուերը։ Ուստի՜ կառելի եղածին չափ շուտ Գորէնհակ հասնելու ենք, որ կարենանք փոխադրուելու մի-

ջոց մը գտնել։ Գնա՛ պայուսակդ պատասխանէ։

Չկրցի պատասխան մը գտնել այդ խօսքին։ Կրախապէն ետեւէս եկաւ։ Ինքը ձեռքովը կարգի դրաւ պզտիկ պայուսակի մը մէջ այն ամէն անհրաժեշտ առարկաները, որոնց պէտքը ուղեւորութեան մը ատեն զգալի է մեծապէս։ Կրախապէն գրեթէ յուզուած չէր, կարծես թէ Լիւպէք կամ Հէլիկոլանա շրջագայելու կ'երթայինք. իր փոքրիկ ձեռքերը կը շարժէր առանց շփոթութեան, հանգստութեամբ կը խօսէր, ամենաքանաւոր պատճառներ առաջ կը բերէր ի նպատակ մեր արշաւանքին։ Նէ կը կախարդէր զիս, և սակայն մեծ զայրոյթ կ'զգայի իր դէմ։ Մերթկուզէի խարկանալ, բայց նէ կարեւորութիւն չի տալով, իր աշխատութիւնը կը շարունակէր կանոնաւորապէս։

Պայուսակին վերջին փոկն ալ կոճկուեցաւ։ Գետնայարկը իջայ։ Ամաղջ օրը՝ բնագիտական գործիքներու, գէնքերու, երեկոյանական գործիքներու հայթայթիչներ կ'երթային կու գային։ Մարթային խեղքը գլխին գալած էր։

«Պարտնը խենդեցե՞ր է, ըսաւ ինծի։

Հաստատական նշան մ'ըրի։

«Եւ ձեզի իր հե՛տ պիտի տանի։

Նորէն հաստատական նշան մ'ըրի։

«Ո՛ւր արդեօք» ըսաւ։

Մտտովս ցոյց տուի երկրիս կեդրոնը։

«Նկո՛ւղը, գոչեց պառաւ սարսուհին։

— Ո՛չ, ըսի վերջապէս, աւելի՜ վար։»

Իրիկուն եղաւ։ Ալ գիտակցութիւն չունէի սահած ժամանակին վրայ։

«Վաղն առտու ժամը ճիշդ վեցին պիտի մեկնինք, ըսաւ մօրեղբայրս։»

Գիշերուան ժամը 10ին անկողնիս վրայ ինկայ, անդգայ զանգուածի մը պէս, և մինչեւ առաւօտ արհաւիրքներու մէջ անցուցի։

Ինքզինքս անդունդներու մէջ կ'երազէի։ Կը զաւանցէի։ Ինծի այնպէս կու գար որ, իբր թէ բրօքէսէօրը՝ զիս իր հուժկու ձեռքերուն մէջ սեղմած ետեւէն կը քաշուէր, անդունդէ՛ անդունդ կը գահավիժէր։ Անյատուկ գահավիժներու խորը կ'իյնայի այնպիսի աճեցուն արագութեամբ մը, որ միջոցին մէջ վար ինկող մարմիններուն յատուկ է միայն։ Անվերջանալի անկում մըն էր կեանքս։

Ժամը հինգին արթնցայ. յոգնութենէ պարտաւորութեամբ չափազանց ջանքալիցում, ճաշարահը մտայ: Մօրեղբայրս սեղան նստած կերակուրները կը լսէի: Ստատափով լեցուն նայումք մը նետեցի անոր վրայ, բայց կրակաւէն հոն էր, բան մը չըսի: Չկրցի բերանս բան զնել:

Ժամը հինգ ու կէսին կառքի թաւալում մը լսուեցաւ փողոցին մէջ: Լայն կառք մը եկած էր Ալթօնայի երկաթուղին տանի մեզ: Մօրեղբորս ծրարները անոր վրայ տեղաւորեցինք:

«Քու պոյսուսկը ո՛ւր է, ըսաւ ինծի:

— Պատրաստ է, պատասխանեցի ու ժաթափ:

— Շուտ վար իջեցո՛ւր, կառախումբը պիտի փախցնենք:

Այլ ևս անկարելի թուեցաւ ինծի ճակատագրիս գէ՛մ կուտիլ: Սենեակս ելայ ու պոյսուսկս սանդուխին աստիճաններէն վար սահեցնելով, ես ալ վար իջայ:

Այդ պահուն մօրեղբայրս հանդիսաւորապէս կրակաւէնի կը յանձնէր իր տան «գեկը»: Իմ գեղանոյց վիւրանատահիս իր սովորական պաղարիւն հանդարտութեանը մէջ ողջագուրեց իր խնամակալը, բայց երբ իր փափկաթալմ չրթ ունքներով այտերս կը գգուէր, չի կրցաւ իր արցունքը զսպել:

«Կրակաւէն», գոչեցի:

«Գնա՛, սիրելի՛ս Աքսէլ, գնա՛, հիմա նշանածդ կը թողուս, բայց վերադարձիդ կիներ պիտի գտնես հաս:»

Կրակաւէնը թեւերուն մէջ սեղմեցի, ու կառքը նետուեցայ: Մարթա և նորասի աղջիկը դրան սեմէն վերջին սղջերթ մ'ալ ուղղեցին մեզի, յետոյ ձիերը կառապանին սուլումէն գրգռուած, սրտըռու մեկնեցան դէպ ի Ալթօնա տանող պողոտային վրայէն:

Ը.

Ալթօնա՝ Համպուրիի ճշմարիտ արձակափայլն է, ուր կը գտնուի Քիլի երկաթուղիի գծին սկզբնաւորութիւնը, որ զմեզ Պէլլի եղբւրքները պիտի տանէր: Քսան վայրկեանէն Հօլթէյն հասանք:

Ժամը վեց ու կէսին կառախումբը կանգ

առաւ կայարանին տոջիւ: Մօրեղբորս բազմաթիւ ծրարները, ճամբորդութեան մեծածաւալ գոյքերը վար առնուեցան, տեղափոխուեցան, կշռուեցան, պիտակուեցան ու երկաթուղիին գոյքարարձ կառքին մէջ փախադրուեցան, ժամը եօթն էր երբ կառախումբին մէջ զիմացէ զիմաց նստած էինք: Շոգին չչեց ու վայրաշարժը սկսաւ յառաջանալ: Կը մեկնէինք արդէն:

Համակիրպա՛ծ էի արդեօք: Ո՛չ տակաւին: Սակայն առտուան ցով օդը, և ճամբուն շուտանցիկ ու այրաղան մանրամասնութիւնները մտախոհութիւնս ցրուեցին:

Սնտարակոյս բրօֆէսթօրին մտածումը աւելի արագ կը սուրտը՝ քան երկաթուղիին գանդաղ գնացքը, որ տնջուչ տնհամբերութիւն կը պատճառէր իրեն: Մինակ էինք կառախումբին մէջ ու չէինք խօսակցեր: Մօրեղբայրս մանրամասն ուշադրութեամբ աչքէ կ'անցունէր ճամբորդութեան արկղն ու գլըրպանները: Դիտեցի որ իր ծրագրներուն գործագրութեանը անհրաժեշտ և ո՛չ մէկ բան կը պակսէր:

Ատանց մէջ թերթ մը թուղթ կար խնամով ծաղկում, որ Դանիական հիւպատոսարանին պաշտօնական մակագիրը կը կրէր, ստորագրութեամբ Պ. Քրիսթիէնսենի, որ Համպուրիի հիւպատոսն ու իր բարեկամն էր: Այդ թուղթը, ամէն գիւրութիւն պիտի տար մեզի, Քորէնհայի մէջ յանձնարարականներ ձեռք ձգելու, Իսլանտայի կառավարչին ներկայացնելու համար:

Նոյնպէս դիտեցի որ՝ հռչակաւոր վաւերագիրը թղթապանակին ամենէն գազարնի խորը պահած էր խնամքով: Արախ խորէն անխնայեցի այդ թուղթը, ու սկսայ կառատնետակին պատուհանէն դուրս նայելով, երկիրը քննել: Քիչ չահեկան, միօրինակ, դրսախառն և բաւական արգասաբեր զաշտագետիւններու յաջորդութիւն մըն էր. շատ նպատաւոր երկաթուղիի ընկերութեան մը, և յարմար՝ ուղիղ գծերու, որոնք այնքան դիւրագին են երկաթուղիի ընկերութեանց համար:

(Շարունակ)

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Շերամաբոյճներու ուշադրութեան կը յանձնարարենք, թերթիս կողքին երկրորդ երեսին վրայ գտնուած Պուլուտեան եղբայրը ազդը:

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԹՐԻՊՈԼՈՒ. — Գ. Թ. Գըլըճեան էֆ. — Նոր բաժանորդին թերթերը իրեն՝ և ձեզ նամակ ղրկեցինք :

ԱՏԱԲԱԶԱՐ. — Կը ղրկենք ուզուած թիւերը, միւսը կը կարգադրուի :

ԱՏԱԲԱԶԱՐ. — Գ. Թ. Ստրայտարեան էֆ. — Ստացած ենք. գիտէինք այդէն :

ԱՐԱՐԿԻՐ. — Գործակալ. — Ձեր պատասխանին կը ուղարկենք :

ԵՐԶՆԿԱ. — Ս. Ա. էֆ. — Կը ղրկուի : Շնորհակալութիւն :

ԱՏԱԲԱԶԱՐ. — Մ. Կ. Սէմիգեան էֆ. — Դիտական գիրքերը հասկնալու համար անշուշտ վարժութիւն և լեզուի բաւականաչափ հմտութիւն պէտք է : Ձեր առաջին հարցումը չկրցինք հասկնալ թէ, ո՞ր մասին համար է. պէտք է բացորոշ գրել, գէթ մեր ժամանակը խնայելու համար : Բ. — Մեքենաներու ուժը հասկնալու համար, կը գործածեն ուժաշափ գործիներ. իսկ երրորդ հարցումին կը պատասխանուի իր կարգին :

Մէկ քանի բաժանորդներ կարգ մը յանձնարարութիւններ ըրած են մեզ. թէ եւ կ'ուզենք մենք հաճոյակատար ըլլալ, իայց պէտք է յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ ղրկեն մեզ :

Նոյնպէս, մէկ քանի բաժանորդներ կը հարցունեն մեզ թէ, կրնա՞նք Վեր. Հ. Ս. Երամեանի Գործն. Դիտ. Բառարանը ղրկել իրենց : Այո՛, կը ղրկենք, եթէ գրամը կանխիկ ղրկեն մեզ, չի մոռնալով թղթատարական վարձքը :

Ե Ր Ո Ւ Ա Ն Դ Գ Ա Ս Ա Պ Ե Ա Ն

ՏՈԳԴՈՐ ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Կուզէ՞ք որ՝ ատամնաբուժական արուեստին ու գիտութեան հնարած վերջին և ամենէն աւելի բնաիր մեթոտներուն համեմատ՝ շինուին ձեր նոր շինելիք՝ ամբողջ կամ կիսովի՝ ակումները՝ (քիմքով թէ առանց քիմքի) :

Կ'ուզէ՞ք որ ձեր ակումները ձիւնի պէս ճերմակ, ադամանդի չափ դիմացկուն ըլլան : Կ'ուզէ՞ք որ՝ եթէ փտած,

վնասուած կամ ցաւոտ ակումներ ունիք, լեցուին, դարմանուին, բժշկուին կամ քաշուին, առանց ցաւի. կ'ուզէ՞ք որ ձեր բերանը կամ շունչը ժահահոտութենէ, հիւանդութենէ զերծ մնան և խունկ ու ծաղիկ բուրեն.

Դիմեցէ՛ք

Կ. Պոլիս, Բարմազ-գափու, Պալմաճուլար, թիւ 29,

Առ ատամնաբոյժ Տոգդոր Երուսնդ Գասապեան :

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԷՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԷԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ


Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիներ. Անդղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը յարմար գներով : Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին : Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը ղրկուին դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով :

ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՓՈՇԻ

Ձոր մեծաքանակ բերել տուած է վերոյիշեալ վաճառատունը՝ ուղղակի Տալմացիայէն :

Մլուկները, լուերը, և ուրիշ ատոնց նման վնասակար միջատներ վայրկենապէս չանթահար կ'ընէ :

Թարմ. խիտ ազդեցիկ և գինը ատան :



Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԷՅԻ ՄԵՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ձինական, Հնդկական և ճարտական
ամենաընտիր տեսակէ եղող արտադրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Դաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշգիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է. Կ. Պոլիս, ձէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. այն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն դը-
նահատուած ըլլալով, շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են. ուստի
ղղուշանալու համար, վերոյիշեալ ժա-
նառանիշին տակ Կ. Եսովրուէն թի-
ւադուլեան ստորագրութիւնը ընտե-
րէք:

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ
(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒՄԷ

Դիմեցէք տուանց երկմտելու, Դուռ-
Դափու Չարիֆեան դեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ա. Չարիֆ-
եան էֆ.ի հնարած «հակահոշտային»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:

Դաւառներէ ուղղներու կը զրկուի
թղթատարով:

ՀԱՅ ՇԱՐԱՐԱՎԱՃԱՌԸ

Եթէ կուզէք պատուական, համով
հոտով և աժան «լոգուժէքէրի» ուտել,
դիմեցէք առ Սարգիս էֆ. Սլէմեան,
Էսկի-Չապթիյէ, թիւ 57, ճիշդ Թուր-
քիա Ոթէլի անկիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԷԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ-29րդ Տարի, Կիսամաթի Թ
աղգային, Գրական և Քաղաքական Խմբագիր. Տնօրէն
Մ. Մամուրեան: - Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 ֆր-
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Խլմիր:

ԲԱԶՄԱՎԷՊ-57րդ տարի, ամաթերթ, Հայ մատե-
նագրական, ստուգարանական, պատմական, քերական.
նական, աշխարհագրական, հնախոսական, և ընդ - Տա-
րեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavap",
St. Lazare Venise (Italie)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ - 13րդ տարի. ամաթերթ.
Հայ-գրական յօդուածներէն զտտ ճշտիւ տեղեկութիւն
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւ ըն-
դհականութեան, ամէն տիպի հրատարակութեանց վը-
րայ եւ ընդ - Տարեկան կանխիկ 10 ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",
VII² Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'առարարէք մի
միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՒԱՏ,
որու գլխիւ պէտք է, առանց բացառութեան,
թերթիս վերաբերեալ ամէն գործառնու-
թեանց համար:

در علیہ دہ ہفتہ قبوسندہ اسکی ضبط ہوا
۱۹ نومرولی دکاندہ «مجموعہ علوم»
سر محرری (بولاد) افندی بہ

Է. Պոլատ Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Դափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul